ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզում 2014թ. դեկտեմբերի 24-ի դրությամբ իրականացված ծրագրերի վերաբերյալ

2014թ. ընթացքում ՀՀ Արմավիրի մարզում իրականացվել են ընդհանուր առմամբ շուրջ **11,223.0 մլն դրամի** տարբեր ոլորտային ծրագրեր, մասնավորապես՝

ՀՀ պետական բյուջեի միջոցներով	**3,189.3**	**մլն. դրամ**
Միջազգային և դոնոր կազմակերպությունների միջոցներով	**54.8**	**մլն. դրամ**
Մասնավոր /բարեգործական/ ներդրումներով	**6,471.8**	**մլն. դրամ**
Համայնքային բյուջեի միջոցներով	**683.4**	**մլն. դրամ**

2014թ. ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցներով մարզում փաստացի իրականացվել են հետևյալ ծրագրերը.

ՀՀ պետական բյուջե

- **ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ** իրականացվել են գ.Ալաշկերտի միջն. դպրոցի վերակառուցում, Մեծամորի թիվ 2 ավագ դպրոցի տանիքի վերանորոգում, Պտղունքի նոր դպրոցի կառուցման գոյություն ունեցող նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակման, արդիականացման աշխատանքները 87.6մլն դրամ ընդհանուր արժողությամբ
- **ՀՀ պետական բյուջե՝ ՀՀ կառավարության 10.04.2014թ. N 532-Ն որոշում /5-րդ հրատապ ծրագիր/ -** իրականացվել է թվով 9 դպրոցի հիմնանորոգում– 468.1 մլն.դրամ
  4 դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցում- 156.1 մլն. դրամ
- Տնկարան – Զինավան - 5 ավտոճանապարհի վերանորոգում -4,9 մլն. դրամ
- Մ-5-Մերձավան-Այգեկ-Մ-5 ավտոճանապարհի վերանորոգում -12.7հազ. դրամ
- Մ-3 – Շահումյան ավտոճանապարհի վերանորոգում - 5.9 մլն. դրամ
- Արմավիրի մարզպետարանի դահլիճի վերանորոգում -2.8 մլն.դրամ
- Մայիսյան և Եղեգնուտ համայնքներում ոռոգման ջրի մեկական խորքային հորերի հորատում -62.4 մլն.դրամ

Արմավիր համայնքում քամու հետևանքով վնասված բնակելի շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքներն ավարտին հասցնելու նպատակով Արմավիր քաղաքային համայնքին պետական աջակցության ցուցաբերում - 5.0 մլն .դրամ

ՀՀ մշակույթի նախարարության պատվիրատվությամբ

- «գ.Այգեշատ, Թարգմանչաց եկեղեցու վերականգնում» ծրագիր **- 17.2 մլն. դրամ**

ՀՀ արդարադատության նախարարության պատվիրատվությամբ

- <<Արմավիր>> նոր քրեակատարողական հիմնարկի կառուցում ծրագիրը **- 996.1մլն.դրամ**

ՀՀ Արմավիրի մարզպետարանի պատվիրատվությամբ

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանում և շահագործում 32.0մլն. դրամ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ իրականացված աշխատանքներ.

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանում և շահագործում - 281.9մլն .դրամ

- Նշագծման աշխատանքներ - 33.65մլն. դրամ
- Մետաղական արգելափակոցներ - 10.5մլն. դրամ
- Հ-284 (Մ-3)- Ջրառատ-Գայ-Ակնաշեն (Գայ-Ակնաշեն հատված) հիմնանորոգում - 81.9 մլն. դրամ
- Մ-5-Նոր Կեսարիա-Շենավան-Գետաշեն, կմ1+900-կմ7+220 հատվածի վերականգնման աշխատանքներ (5.32կմ) -սկիզբ 2013թ. - 136. 9մլն. դրամ
- Հ-15, Արմավիր-Արգավանդ-Մարգարա հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ8+400 հատվածում գտնվող սլավինսկու տիպի կամրջի վերանորոգում - 4.1 մլն դրամ

ՀՀ պետական բյուջեի վարկային ծրագրեր

Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվել են «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ վերանորոգում և Ակնալիճ համայնքի բուժամբուլատորիայի շենքի կառուցում ծրագրերը՝ շուրջ **50.0մլն դրամ**

- **Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ** «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից շարունակվել է Էջմիածին քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման ծրագիրը
- **Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ** «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից Վաղարշապատի տարածաշրջանի 12 համայնքում շարունակվել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման ծրագիր

Մասնավոր /բարեգործական/ ներդրողների միջոցներով

«ՄԱՊ» ՓԲԸ նոր արտադրամասի բացում -2,5մլն.եվրո

Բաղրամյանի թռչնաբուծական ֆաբրիկայի կողմից Եղեգնուտ համայնքում նախկին Արզնի թռչնաբուծական ֆաբրիկայի ձեռքբերում, վերակառուցում, գազի գծի անցկացում և նոր սարքավորումներով վերազինում՝ 2014թ. համար իրականացվել է շուրջ 5.0 մլն.դոլարի ներդրում:

Վանանդում <<Նոյան>> պտուղ-բանջարեղենի վերամշակման գործարան -2,0 մլն. դոլար /կաթիլային համակարգ, լիճ, տեխնիկա/

<<**Նոր Ակունք**>> **ՓԲԸ-ի** կողմից թվով 8 համայնքներում իրականացվել են ոլորտային ծրագրեր **9.3մլն.դրամ** ընդհանուր արժողությամբ:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ –ի կողմից իրականացվել են շուրջ 7.8 մլն.դրամ ընդհանուր արժողությամբ ծրագրեր

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ Մուսալեռ մասնաճյուղի կողմից իրականացվել են ոլորտային մի շարք ծրագրեր:

Բարերար Հրանտ Սահակյանի կողմից Նորապատ համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում - 250.0 մլն. դրամ

Արմավիր քաղաքում բարերար Կարեն Մկրտչյանի կողմից եկեղեցու կառուցում /ավարտվել է, 2014թ. ներդրում/ - 80.0 մլն. դրամ

Ջանֆիդա համայնքում բարերար Արթուր Կարապետյանի կողմից եկեղեցու կառուցում /ավարտվել է, 2014թ. ներդրում/ - 48.0մլն.դրամ

Դալարիկ համայնքում բարերար Գագիկ Վարդանյանի կողմից եկեղեցու կառուցում /ավարտը՝ 2015թ-ին/ - 40.0մլն. դրամ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացված կապիտալ ծրագրեր - 283.0 մլն. դրամ

Հայաստանի Մանուկների հիմնադրամի կողմից մարզի 18 համայնքներում իրականացված Գյուղական համայնքների զարգացում ծրագիր 949հազ.դոլար ընդհանուր արժողությամբ -435.6 մլն.դրամ

Միջազգային և դոնոր կազմակերպությունների միջոցներով

«ՎիվաՍել-ՄՏՍ»-ի և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության/USAID/ ֆինանսական աջակցությամբ Արազափ և Լուկաշին համայնքների խմելու ջրամատակարարման նոր համակարգի կառուցում - 50.0 մլն. դրամ

«ՎիվաՍել-ՄՏՍ»-ի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքում 4 կիսակառույց բնակելի տների ավարտում և 6 բնակելի տների տանիքների վերանորոգում - 4.5 մլն. դրամ

2014թ. մարզի առևտրաարդյունաբերական վիճակագրական ցուցանիշներն են.

2014թ-ի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում մարզում թողարկվել է 3258,9 մլն դրամի ավել արդյունաբերական արտադրանք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 39641,5 մլն դրամի փոխարեն՝ կազմելով 42900.4 մլն. դրամ: Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը կազմել է 102.8%, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակասել է 5%-ով

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի (e-register.am) հրապարակած տվյալների՝ 2014թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ Արմավիրի մարզում գործում են ընդհանուր առմամբ 1481 առևտրային կազմակերպություններ, 478 հասարակական կազմակերպություններ և 6836 անհատ ձեռնարկատերեր (նախորդ տարվա ցուցանիշները համապատասխանաբար եղել են՝ 1417, 439, 6462):

Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը 2014թ. սեպտեմբեր ամսին կազմել է 141.9 հազ դրամ (պետական հատված՝ 132.1 հազ. դրամ, ոչ պետական՝ 166.6 հազ.դրամ):